Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«_07_»__դեկտեմբերի__2020 թ. թիվ 148 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____Ա. Սարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

Ներգնա և արտագնա շարժունություն

ԳԱՅ ցուցանիշ 6.1. Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը

	2015	2016	2017	2018	2019	2020*
Պայմանագրերի թիվը	14	18	25	24	33	40
Գործուղումների թիվը ըստ գործընկերների	1	6	11	15	37	0*

ԳԱՅ ցուցանիշ 6.2 Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ

	2015	2016	2017	2018	2019	2020
Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ	0	9	12	6	13	0*

Ցուցանիշ 6.3 Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվը

	2015	2016	2017	2018	2019	2020
Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվ	0	8	2	14	8	0*
ԳԿՄԿ-ում սովորող օտարերկրյա ուսանողների թիվ					2	0*

*Կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված՝ 2020թ. շարժունության բոլոր ծրագրերը կասեցվել են:

Բաժնի կողմից մասնակցած միջոցառումներ

- ս.թ. հունվարի 21-ին բաժնի գլխավոր մասնագետ էլլա Պապիկյանը մասնակցել է Էրազմուս+ ԲՈՒՍԹ՝ «Հայկական համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի

• խթանում» ծրագրի շրջանակում բարձրագույն կրթության միջազգայնացման վերաբերյալ համաժողովին:
• ս.թ. հունիսի 30-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է 2020 EURAXESS-Armenia նախագծի շրջանակներում Եվրահանձնաժողովի հետ համատեղ կազմակերպվող առցանց վերապատրաստմանը /Training-Webinar for EURAXESS-Armenia Contact/:
• ս.թ. հուլիսի 9-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է NCP MSC վեբինարին «The Benefits of the Euraxess portal for researchers and institutions»:
• ս.թ. հուլիսի 15-17-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է «Դոկտորական կրթության քաղաքականություններ և կառուցվածքներ» թեմայով կարողությունների զարգացմանը միտված հեռավար վերապատրաստմանը «Դոկտորական կրթության բարեփոխումը հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին եւ ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) ծրագրի շրջանակներում:
• ս.թ. հոկտեմբերի 7-ին մասնակցել է բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Էրազմուս+ ազգային գրասենյակի առցանց քննարկմանը՝ նվիրված համաճարակով և պատերազմով պայմանավորված մարտահրավերների քննարկմանը:
• ս.թ. դեկտեմբերի 23-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է ԱՓՇԱՏԿ վերապատրաստմանը՝ օտարերկրյա որակավորումների և շարժունության արդյունքների ճանաչման վերաբերյալ:

<u>Բաժնի կողմից կազմակերպած միջոցառումներ</u>

• բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնագիտական վերապատրաստում է անցկացրել օտար լեզուների ամբիոնի դասախոսների համար՝ օտար լեզվի հեռավար դասընթացների կառուցման արդյունավետության վերաբերյալ,

• անցկացվել է առցանց հանդիպում նվիրված Եվրոպական քոլեջի ակադեմիական և կրթաթոշակային ծրագրերին,

• անցկացվել է Տուշայի համալսարանի բաց դռների օր առցանց միջոցառում:

<u>Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր</u>

Կենտրոնը մասնակցում է ՝

➢ «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրին, որի շրջանակներում իրականացվում են «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի առարկայական նկարարգրերի բարեփոխում/թարմացում, արդեն իսկ հաստատվել է բարձրաէֆեկտիվ հեղուկային քրոմատագրային համակարգի մատակարարման պայմանագիրը միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիայի համար (ERLEP):

• «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրին, որոնց շրջանակներում ձեռք է բերվել համակարգչային և այլ տեխնիկա, ինպես նաև մշակվել են դոկտորական կրթության բարելավմանն ուղղված մի շարք փաստաթղթերի նախագծեր՝ ըստ ենթախմբերի առաջադրանքների:

• ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը՝ «EURAXESS՝ գիտնականները շարժման մեջ»

եվրոպական ցանցի կոնտակտային կազմակերպություն. «EURAXESS՝ գիտնականները շարժման մեջ» ցանցը Եվրահանձնաժողովի առանցքային նախաձեռնություններից է, նպատակ ունենալով նպաստել գիտնականների շարժողությանը և կարիերայի զարգացմանը՝ ըստ այդմ, խթանելով եվրոպական գիտական տարածքի զարգացումը: EURAXESS ցանցի հիմնական նպատակն է դյուրինացնել գիտնականների համաեվրոպական շուկայի ձևավորման գործընթացը՝ տրամադրելով անվճար տեղեկատվական ծառայություններ և բարձրորակ աջակցություն գիտնականների կարիերայի առաջընթացին նպաստելու համար:

Կնքված նոր հուշագրեր և համաձայնագրեր

Միջազգային հուշագրեր և համաձայնագրեր

- Կնքվել է կրկնակի դիպլոմի շնորհման համաձայնագիր WSB ակադեմիայի հետ /Լեհաստան/:
- Կնքվել է ցանցային համագործակցության պայմանագիր՝ առցանց դասընթացների միջոցով կրթական ծրագրերի իրականացման մասին Ռուսաստանի ազգային հետազոտական համալսարանի բարձրագույն տնտեսագիտական դպրոցի հետ:
- Կնքվել է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական բնապահպանական լաբորատորիայի օգտագործման համաձայնագիր Գավառի պետական համալսարանի հետ
- Կնքվել է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական բնապահպանական լաբորատորիայի օգտագործման համաձայնագիր Իլյայի պետական համալսարանի հետ /Վրաստան/:
- Կնքվել է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական բնապահպանական լաբորատորիայի օգտագործման համաձայնագիր Վրաստանի համալսարանի հետ /Վրաստան/:
- Կնքվել է համագործակցության համաձայնագիր Օդեսսայի հայկական համայնքի հետ /Ուկրաինա/
- Կնքվել է գիտական և կրթական համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի և Պավիայի համալսարանի միջև, /Իտալիա/
- Կնքվել է միջինստիտուցիոնալ համագործակցության համաձայնագիր Տուշայի համալսարանի հետ, /Իտալիա/ 2019-2022թթ
- Կնքվել է միջինստիտուցիոնալ համագործակցության համաձայնագիր Տուշայի համալսարանի հետ, /Իտալիա/ 2020-2023թթ
- Կնքվել է համագործակցության նոր համաձայնագիր Տուշայի համալսարանի հետ /Իտալիա/
- Կնքվել է միջինստիտուցիոնալ համագործակցության համաձայնագիր Կրակովի գյուղատնտեսական համալսարանի հետ /Լեհաստան/
- Կնքվել է միջինստիտուցիոնալ համագործակցության համաձայնագիր Լեհաստանի Կրակովի մանկավարժական համալսարանի հետ /Լեհաստան/
- Կնքվել է գործընկերության համաձայնագիր՝ Ռուսաստանի ազգային հետազոտական համալսարանի բարձրագույն տնտեսագիտական դպրոցի հետ հեռավար կրթության զարգացման ոլորտում
- Կնքվել է կրկնակի դիպլոմի շնորհման համաձայնագիր Տուշայի համալսարանի հետ /Իտալիա/ «Ֆինանսական վարչարարություն» և «Շուկայաբանություն և որակ»

մասնագիտություններով

- Կնքվել է միջինստիտուցիոնալ համագործակցության համաձայնագիր Լյուվենի կաթոլիկ համալսարանի հետ /Բելգիա/

<u>Ներպետական հուշագրեր, պայմանագրեր և համաձայնագրեր</u>

- Կնքվել է համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հետ
- Կնքվել է Կենսաապրանքների տեխնոլոգիաների և գիտության գերազանցության ազգային ցանցին միանալու համաձայնագիր
- Կնքվել է պրակտիկայի կազմակերպման պայմանագիր «Նատալի Ֆարմ Դեղատուն» ՍՊԸ-ի հետ

<u>Մշակված փաստաթղթեր</u>՝

- Մշակվել և հաստատվել է ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարությունը
- Մշակվել և հաստատվել է կրեդիտային շարժունության արդյունքների ճանաչման ընթացակարգը
- Մշակվել և հաստատվել է միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի ուսանող մասնակիցների հարցման ընթացակարգը

<u>Հաշվետու տարում բաժինը</u>՝

- պատրաստել, թարգմանել և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վեբկայքում է տեղադրել 22 նորություն և 13 հայտարարություն, որը կազմում է ԳԿՄԿ վեբկայքում տեղադրված նորությունների և հայտարարությունների առավել քան 45%-ը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժին պետ՝ Ա. Հարությունյան